

ԴԱՇՏԵՆՑԻ ԱՐՁԱԿԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ

Ա. Զ. ԱՐԻԼԽԱՆՅԱՆ

Գեղարվեստական երկի գրական-գեղարվեստական արժանիքները գնահատելիս, անշուշտ, նկատի են առնվում նաև տվյալ ստեղծագործության լեզվական առանձնահատկությունները: Երկում գրողի տաղանդը դրսևորվում է նրանով, թե նյութի մատուցումը ինչ եղանակով է կատարվում, ինչ լեզվական և արտահայտչական հնարանքներից է օգտվում գրողը իր ստեղծագործությունը կերտելիս, և ինչ դեր են խաղում այդ լեզվական միջոցները հեղինակային խոսքի և հերոսների խոսքի կառուցվածքային համակարգում:

Դաշտենցի արձակի քառասյառը գրական, ժողովրդախոսակցական և քարքառային քառերի մի համակարգ է, որի մեջ էլ դրսևորվում են հեղինակային ոճի յուրահատկությունները: Հեղինակի իմքնատիպ ոճի գաղտնիքը էպիտային մտածելակերպն է, որը հնարավորություն է ընձեռել գրողին օգտագործելու մեր ավանդական վեպի լեզվաոճական հնարանքի միջոցները: Ավանդական վեպի լեզվաարտահայտչական միջոցների օգտագործման շնորհիվ հեղինակային խոսքը ձեռք է բերել պատմային բնույթ: Այդ առումով պատմային ոճը ավելի համոզիչ ու տպավորիչ է դարձնում Դաշտենցի վեպերում նկարագրվող դեպքերն ու իրադարձությունները, մարդկանց սխրանքները, նրանց դառն ճակատագրերն ու հոգեկան ապրումները: Այդ ամենին հեղինակը հասնում է՝ ընտրելով լեզվաարտահայտչական համապատասխան միջոցներ ու լեզվական հնարանքներ, որոնք առաջին հերթին քիտում են գրողի ժողովրդային մտածելակերպից: Վեպի սյուժեն, միջավայրը, նրանում ծավալվող իրադարձությունների բներանգն ստեղծելու, գործող հերոսներին տիպականացնելու համար բնականաբար թելադրվում են ոչ միայն լեզվաոճական համապատասխան միջոցներ, այլև որոշակի ժողովրդախոսակցական ու քարքառային քառերի օգտագործում: Այս կարգի քառերի գործածությունը հեղինակային խոսքը դարձնում է և ժողովրդային, և ավելի բնական ու կենդանի: Դաշտենցը ձգտել է ստեղծել գեղարվեստական խոսքի մի այնպիսի լեզվական համակարգ, որը լինելով իրենը, միաժամանակ հոգեհարազատ է նաև ժողովրդին և իր ստեղծագործության հերոսներին: «Խողեղանի» առաջաբանում իր հերոսների մասին հեղինակը գրում է, որ «պարզ և աշխատավոր մարդկանց մասին է գրված այս վեպը... նրանք ծնված էին գյուղական անշուք խրճիթների մեջ, ունեին երկրագործի կոշտացած ձեռքեր, ստեղծագործ բազուկ»¹:

Երկու վեպերում էլ Դաշտենցի ընտրած հերոսը սասունցի շինականն է: Մի դեպքում հողին ու արտին կապված, իր արդար վաստակով ապրող հայ գեղջուկը, թուրք և քուրդ հարստահարիչների կեղեքումներին ենթարկվող սասունցի պարզ ու հասարակ մարդը, մյուս դեպքում՝ իր ազատության և առհասարակ բոլոր տեսակի բռնությունների դեմ մարտընչող դարձյալ նույն սասունցի ռանչպարը: Այդ հերոսների ընտրությամբ է պայմանավորված նաև Դաշտենց-գրողի լեզուն:

«Խողեղան» և «Ռանչպարների կանչը» վեպերում հեղինակը նկարագրում է հայ ժողովրդի արևմտյան հատվածի կյանքի ողբերգական էջերը: Նյութի ընտրությունը գրողի կողմից միանման է, որը թելադրում է հիմնականում լեզվաարտահայտչական անանատիպ կառուցվածք, քառասյառի նույնատիպ ընտրություն, հերոսներին տիպականացնելու համարյա միատեսակ հնարանքներ:

Դրանով Դաշտենցի լեզուն դառնում է մի յուրատեսակ հայելի, որի մեջ արտացոլվում է գրողի և հերոսների պարզ ու հասարակ էությունը, հարուստ հոգեկան աշխարհը: Ժողովրդական բառը նոր ոգով է շնչում նրա գրչի տակ, և խոսքն այնքան իրական է դառնում, որ ընթերցողի հոգում առաջացնում է տվյալ իրողության կամ երևույթի դյուրին ու անմիջական ընկալման գազցում: Երկու վեպերում էլ հերոսների հոգեբանության և մտածելակերպի տեսանկյունից են բացահայտվում իրական կյանքը, հայ ժողովրդի պատմության

¹ Խ. Դաշտենց, Խողեղան, Եր., 1960, էջ 7:

տխուր էջերը: Այդ առումով Բակունցի մասին պրոֆ. Ռ. Իշխանյանի դատողությունը հավասարապես վերաբերում է նաև Խ. Դաշտենցիին, «Գյուղի և գյուղացու մասին պատմելիս Բակունցը իր հեղինակային լեզուն այնպես է կառուցում, որ այդ լեզվի միջոցով անընդհատ պահպանվում է գյուղական կյանքի զգացողությունը»²:

Դաշտենց-գրողի լեզուն հայ ժողովրդի կենդանի խոսքն է, իր իսկ ժողովրդի ստեղծած, ժողովրդական ակունքներից սերող հայ հերոսական վեպի լեզուն:

Դաշտենցի արձակի բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ այն հիմնականում կազմված է գրական, այնուհետև ժողովրդախոսակցական, բարբառային և արևմտաճայ գրական լեզվին բնորոշ բառերից:

1. Նրա արձակում, ինչպես յուրաքանչյուր գեղարվեստական երկում, մեծ թիվ են կազմում «չեզոք» կամ համագործածական բառերը, որոնք լեզի բառապաշարի կորիզն են կազմում և ոճական ու հուզաբարոսախոսական գունավորման տեսակետից չունեն գործածության որևէ սահմանափակում: Գրողը հիմնականում նախապատվություն է տալիս ընդհանրական նշանակություն ունեցող բառերին: Ինչպես, օրինակ՝ աշակերտ, այրուբեն, առավոտ, ակունք, աղետ, այգի, անկյուն, աղջիկ, աչք, բազուկ, բուք, գագաթ, գիշեր, զուխ, գյուղ, գործ, դաշտ, եզ, երդիկ, գորք, ընկույզ, թաթ, թիակ, թշվառ, լույս, խոսք, խուց, ծաղիկ, ծառ, ծերունի, ծունկ, կապ, կուրծք, հայր, հաց, հող, ձեռք, ձի, ձյուն, ճրագ, մայր, մարդ, մատնիչ, նամակ, շող, շուն, ոտք, որդի, պատ, պարան, ջուր, սար, սարսափ, սյուն, վանք, վիզ, տարի, տուն, ուղևոր, քար, օրենք, օր, օրորոց և այլն: Արանք հիմնականում առարկայական նշանակություն ունեցող բառեր են: Նշված ոճին պատկանող բառերից կարելի է նշել՝ ասել, քերել, գալ, գծալ, էլենել, գիշել, ընկնել, թողնել, իմանալ, իջնել, լսել, խոսել, ծխել, կարդալ, կնքել, հանդիպել, հնչել, հսկել, մոլորվել, մնալ, նստել, շինել, պայքարել, քայլել, օգնել և այլն: Հատկանիշ ցույց տվող բառերից հիշատակության արժանի են՝ ամուր, ավագ, բարակ, դայար, լավ, ձախորդ, մեծ, մութ, նոր, շոգ, սաստիկ, վատ, ցուրտ, ուժեղ և այլն:

Այս տեսակ բառերը «Հայոց լեզվի բառապաշարի այն միջուկն են, որ դարերի ընթացքում ամրացել, հաստատուն կերպով պահպանվել է և հայերենի թուր դրսևորումների բառապաշարի հիմքը դարձել»³:

Այս կարգի «չեզոք բառերը», լինելով բառապաշարի ամենակենսունակ տարրերը, գեղարվեստական ստեղծագործություններում ստանում են նոր հնչեղություն և բովանդակություն, նոր ոճական արժեք ու նշանակություն: Ուստի և բառերի «չեզոք» անվանումը պայմանականորեն պետք է ընդունել: «Չեզոք» կամ համագործածական բառային միավորները միահյուսվելով բառապաշարի մյուս շերտերի բառերին՝ նպաստում են խոսքի ոճավորմանը, խոսքը դարձնում են ավելի տպավորիչ ու պատկերավոր: Գեղարվեստական ստեղծագործություններում նման բառերի գործածությունը կատարվում է նպատակաուղղված՝ նրանց իմաստային զանազան նշանակությունների շնորհիվ: Այդ առումով տարբեր գրողների մոտ «չեզոք» բառերի գործածությունը ինքնատիպ լեզվաընկալման արդյունք է:

Դաշտենցի արձակի բառապաշարի քննությունը կատարելիս, նկատի առնելով նրա լեզվի յուրահատկությունը, հիմնական շեշտը, քննականաբար, դրվում է ժողովրդախոսակցական և բարբառային բառերի վրա, որոնք լեզվական մյուս միջոցների հետ միասին պայմանավորում են հեղինակի արձակի բառապաշարի լեզվաոճական ընդհանուր որակը: Այդ կարգի բառերից նա օգտվում է տեղի, ժամանակի, միջավայրի երանգավորում ստեղծելու, հերոսներին տիպականացնելու նպատակով: Դաշտենցի խոսքում ժողովրդական և բարբառային բառերի գործածությունը հաճախ հետևանք է այն բանի, որ սովյալ բառի ընտրությունը ավելի հարազատ է հնչում սովյալ իրավիճակում, քան կհնչեր գրական համարժեքը:

2. **Ժողովրդախոսակցական բառեր:** Դաշտենցի խոսքին ժողովրդային երանգ են տալիս հատկապես ժողովրդախոսակցական բառերը: Ժողովրդական լեզուն ունի անսպառ հնարավորություններ, որից օգտվել է հեղինակը: Հայ ժողովրդական կենդանի խոսքի ոգին ու շունչը, լեզվազգացողությունը, բառագործածությունը հարազատ են եղել գրողին, որը խորապես է զգացել ժողովրդական խոսքի կարևորությունը գեղարվեստական երկերում: Տվյալ խոսքաշարում հեղինակը ավելի նպատակահարմար է համարում ժողովրդային բառերը, որովհետև այն ավելի հարազատ է եղել գրողին: Դրանք բառեր են, որոնց մեջ խտացված են մեր ժողովրդի դարավոր փորձն ու մտքի խորությունը, բառեր, որոնք չեն ենթարկվում տարածքային սահմանափակման և կրում են համազգային բնույթ: Դաշտենցը մտորեն է գործածել առօրյա-խոսակցական ոճին բնորոշ բառերը, որոնց շնորհիվ քննարկ-

² Ռ. Իշխանյան. Բակունցի լեզվական արվեստը, Եր., 1965, էջ 73:

³ Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 120:

վող վեպերում ոճավորվում է ոչ միայն հեղինակային, այլև հերոսների խոսքը: Հերոսի հոգեկան ապրումները բացահայտելու, ժողովրդի սովորությունները նկարագրելու համար ժողովրդական բաների, բառաձևերի, հարադրությունների, դարձվածքների, ասացվածքների ընտրությունը տվյալ դեպքում ավելի համահունչն է և ավելի հոգեհարազատ ժողովրդին, քան գրական համարժեքը: Այս սկզբունքով է առաջնորդվել Ն. Դաշտենցը: Գրողի արձակում գործածված ժողովրդախոսակցական բաներից կարելի է հիշատակել՝ ախպեր, ածել, ականջակոթ, աղուհաց, ամազ, ամանաթ, աշխարք, արար-աշխարհ, բաղ, բղավել, բեղ, բուլոջ, բողչա, բողոքավոր, բուստանչի, գել, գելխեղո, գեղ, դավի, դհու, դրոշակ, երինջ, գոռ, գոբա, գոռով, գոտնա, էս, էղ, էն, էսպիսի, էդպիսի, էնպիսի, էծ, թխպել, թվանք, թոփ, ժածք, ժածիկ, իշատեր, իրիկուն, լալ, լեզվակոխ, լեն, լոջ, խաթր, խզակոթ, խանչալ, խըծ-ժալ, խոսկապ, ծլել, ծղնոտ, կոպալ, կոանալ, կուռ, հագուստ-կապուստ, հալ, հալքաթ, հաղումաշ, հայաթ, հանգ, հանդ, հեր, հերստել, դարիթ, դավուրմա, դոջ, դուրքան, ճամփա, ճիպոտ, ճղվել, ճողոպրել, մախաթ, մահանա, մեկել, մորքոր, մուրազ, յափնջի, ճալքանդ, մազիր-վեզիր, շամփուր, շարքաթ, շենկիկ, շենքով-շնորհքով, շիթիլ, շարտել, չախկալ, չարուխ, չիրուխ, չորան, չորել, չուխա, պատառ, պլշել, պճեղ, պնդուկ, պպզել, պրծնել, ջուխտակ, ոսնդա, ոսնչաբար, սաղ-սալամաթ, սել, սլպան, սնըղչի, սնդուկ, սուրու, վերջնել, վեցնոց, վրեն, ուստա, փալան, փահելվան, փափափ, փետ, փշուր, փրթել, քասա, քաչազ, քերծ, քթոց, քշտել, քլոզ, քոչել, քոռուփուչ, քուր, ֆալ և այլն: Այս և նմանատիպ բաների գործածությամբ հեղինակը երանգավորում է հայդուկային և ընդհանրապես հայ շիճականի կյանքին բնորոշ երևույթները:

Հետաքրքրական է նաև, որ հեղինակը գործածում է ժողովրդախոսակցական լեզվից նյութիսի բաներ, որոնք ներթափանցել են նաև գրական լեզվի մեջ: Գրական լեզվի մեջ թանփանցած այդ բաների շնորհիվ խոսքը դառնում է ավելի կենդանի ու կենսունակ, աշխույժ ու դիպուկ: Օրինակներ՝ «Ջգուշացնում էր աղ չթափել, որովհետև համոզված էր, որ աղ թափողը հանդերձյալ կյանքում իր աչքի թերթերունքներով պիտի հավաքի այն»: «Սնդուկի միջից դուրս թռավ մի փոքրիկ բուռնցքաչափ կապոց և զարկված սարյակի պես շրմփաց գետնին» (14—15): «Հանդուգն ու քաջ էին իշխանձորքիք և ավելի թարս» (198—194): «Այդ սասունցին դաշտի ամեն ծալ ու ծուկին ծանոթ էր» (158—194): «Հազած էր մաշված ոտնաման, բրդյա կարմրավուն տաբատ՝ ճոթերը մինչև ծնկները քշտած, կուրծքը մազոտ ու քաց և կրծքի մազերը խառնված, խճճված արայի սև մազերին» (68—194): «Ջուր խմելիս չոքում էր գետնին և բազուկները մի-մի ապառաժի դրած, քիթն ու ականջները կոխում էր աղբյուրի մեջ, երկայն բեղերը ծիծիփացնելով ջրի երեսին» (220—194): «Նա զարմացել էր աստծո խելքի վրա, որ այդ փոքրիկ վայրում այդքան շատ քար էր կուտակել, իսկ Մշո դաշտում մի հատիկ քար չէր թողել, որ մանկալը հերստելիս իր ծուռ գնացող եզան կողին խփի» (160—19):

Նման օրինակները անսպառ են: Բերված օրինակներում, ինչ խոսք, եթե թերթերունք—թարթիչ, շրմփալ—թափով ընկնել, թարս—ձախորդ, ծալ ու ծուկ—անկյուն, քշտել—վեր բարձրացնել, հերստել—ջղայնանալ, խիստ բարկանալ ժողովրդախոսակցական բաների փոխարեն գրական համարժեքները գործածվեն, այդ պատկեր-արտահայտությունները կդադարեն այդպիսին լինելուց: Այդ համատեքստում Դաշտենցի ընտրած ժողովրդախոսակցական բաները ավելի տեղին են հնչում և խոսքը դարձնում ավելի պատկերավոր: Հենց այդ բաների շնորհիվ է խոսքը կենդանություն ստանում, դառնում շարժուն ու արտահայտիչ: Նա գրում է՝ «Ջարկված սարյակի պես շրմփաց» ավելի պատկերավոր է հնչում, քան՝ զարկված սարյակի պես թափով ընկալ գետնին: Ժողովրդախոսակցական բաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես «Բանչապարների կանչը» վեպում հեղինակը նախընտրում է հիմնականում այն ձևերը, որոնք ավելի կենսունակ են ժողովրդական խոսքում:

3. Բարբառային բաներ: Գեղարվեստական գրականության մեջ խոսքը ոճավորելու նըպատակով գործածում են նաև բարբառային բաներ: Միայն թե բարբառային բաների գործածությունը պետք է լինի ճաշակով և ունենա իր նպատակաուղղվածությունը: Դեռ ժամանակին Հ. Թումանյանը պահանջում էր մեծ իրավունք տալ բարբառներին, նրանց բաներին ու ոճերին: «Իհարկե շնորհքի բան է, թե ով ինչքան ու ինչպես կօգտվի էդ աղբյուրից»⁴,— գրում է նա:

Դաշտենցը նա, ինչպես հայ գրողներից շատերը, մեծ տեղ է տվել բարբառային բաների գործածությանը: Նրա արձակ գործերում օգտագործված բարբառային բաները բաժանվում են երկու խմբի՝ ա) միայն Սասնա (նաև Մշո) բարբառին հատուկ բաներ: Ինչպես՝ աղացք, աղբրտիք, աղլեղ, աջատ, առեջ, արախչի, ափո, քալուտ, քավո, քուխ, գազ-

⁴ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1950, էջ 113:

պա, գրիրա, գուգուոա, դայն, դատկան, դմաճ, դուրքին, ելուկան, զավթիա, զմբիլ, զոզան, թաշկե՛, թարկիկ, թեռ, թվեք, ժանգառ, ժմունք, լագլագ, լաքա, լմած, լե, լոգ, խաֆիր, խախարաւ, խլուշիկ, խլիհնք, խորվուն, խուլամ, ծառթըխ, կաղջին, կամ, կլուլիկ, կողել, կրթան, կուգու, կուլափ, հաքան, հալաքի, հավորիք, հատիա, հեղմ, հեշին, հմայիլ, հոսնե՛, հոսնգուլ, հովթափ, հորի, հուսին, հուտա, ճարկարազ, ճիճիրա, ճոքո, ճոշ, ճվշուր, մակրոտոց, մաշիզ, մարդալ, մեվան, մսախ, մթթլոցի, շողտուն, պաղլուլակ, պստեկ, ջղարա, պեմ, տառինք, ցիեկ, ցվիք, ցուլան, ուզնկան, ոխալ, ուշիկ, փասուհի, փեշու անել, փոու-
նիկ, քարշին, քոնուկ, քուլապ, քուվի, օլորտիլ և այլն:

Այս բառերը տարածված են Սասունի (մասամբ նաև Մշո) տարածքում և հիմնականում հասկանալի են միայն այդ բարբառախոս մարդկանց:

Բ) Գավառական բառեր, որոնք տարածքային առումով հասկանալի են մի քանի բարբառախոս վայրերի, ունեն ավելի լայն ընդգրկում: Օրինակ՝ ականջակոթ, ակիշ, ակեզ, ակուլել, ամբար, անթոց, առիճ, բալխիր, բարդոց, բարձկան, բղիկ, բրիշակ, բոճի, դրացի, դուրան, եղկալ, երկայնք, թամբ, թավ, թացան, թխպել, ժածիկ, լաս, խանձե՛, խզակոթ, ծղնոտ, ծղրտալ, կանթ, կոեճ, կոկել, հանգ, հանդ, հատնե՛, հորիկ, ճրագ, ճոթ, մարագ, նստուկ, շամբ, շղրիկ, չոքեր, չվան, չուխա, պեժ, պինչ, պոունգ, ջրտուք, տասնոց, տկր-
րանա՛, փողք, փորմշակ, քնաթաթախ, քոշ և այլն: Ինչպես օրինակներից երևում է, այս կարգի բառերը թափանցել են և ժողովրդախոսակցական լեզու, և մասամբ նաև գրական լեզու՝ նպաստելով լեզվի բառապաշարի հարստացմանը:

Անհրաժեշտ է նշել, որ բարբառային բառերի գործածության հաճախականությունը Դաշտենցի երկու արձակ գործերում տարբերվում են միմյանցից: Եթե «Խողեղախոս» բարբառային բառերը ավելի ընդգծված են գործածված, ապա «Իրանչապրների կանչում» բարբառային բառերը քանակով զիջում են ժողովրդախոսակցական բառերին: «Խողեղա-
նում» մեծ քանակությամբ բարբառային բառերի գործածությունը հեղինակի համոզմամբ կա-
տարված է տեղի և ժողովրդի կյանքի ճշմարիտ երանգավորում ստեղծելու անհրաժեշտու-
թյամբ և պահանջով: «Խողեղանի» առաջին հրատարակության մեջ Սասունի բարբառին
պատկանող մեծ թվով գործածված բառերից շատերը հաճախ անհասկանալի են բարբառին
անծանոթ ընթերցողին: Մի հանգամանք, որ ստիպել է հեղինակին վերամշակել գրքի առա-
ջին հրատարակությունը, և վեպի երկրորդ հրատարակության մեջ բառապաշարը որոշ չա-
փով քեռնաթափվել է հիշյալ կարգի բառերից, թեև երրորդ հրատարակության մեջ դեռևս
թավականաչափ բարբառային բառեր կազմում են հերոսների և մասամբ նաև հեղինակի
լեզվի աստղծը:

«Խողեղանի» երեք հրատարակությունների համեմատական քննությունը ցույց է տալիս,
որ Դաշտենցը վերջին երկու հրատարակություններում արդեն բարբառային բառերի փո-
խարեն նախընտրում է կամ ժողովրդախոսակցական, կամ գրական համարժեքները: Օրի-
նակ՝ «Մեր պապերու սիրուն աշխարհ, կըց զմեղր քաղցր, կըց զմայրական կաթ անուշ,—
շնջաց Թամոն» (28—50): «Մեր պապերի սիրուն աշխարհ, մեղրի պես քաղցր, մայրական
կաթի պես անուշ» (28—58, 28—80): «Էս Դավթի այլուն է նստուկ ջաղացի պատերին:
Հազար տարի կեղնի էն կպուկ է ջաղացի պատերին ու հա կա, հա կա» (17—50): «Էս
Դավթի այլուն է նստած պատերին: Նրա աղունից էս է մնացել: Հազար տարի է անցել,
քոց նա դեռ կպած է ջաղցի պատերին ու հա կա» (28—80): «Երբ խոնջել էին, Թամոն
կանգնեց» (28—50): «Երբ հանգստացան, Թամոն կանգնեց» (82—80): «Երկու շաքաթ
մեկ անգամ կիզա բերդ, կթժլի Դավթի հիվանդ էժերին ու կերթա» (22—50): «Երկու
շաքաթը մեկ անգամ գալիս է բերդ, թժլում Դավթի հիվանդ այժերին ու գնում» (31—80):

Դաշտենցը ինչպես իր հեղինակային, այնպես էլ հերոսների խոսքում հիմնականում
ընտրում է այնպիսի բարբառային բառեր, որոնց միջոցով երանգավորվում է գյուղական
միջավայրը, սասունցի գյուղացու արտաքին նկարագրությունը, նրա հոգեբանությունը: Նույ-
նիսկ հեղինակային խոսքում օգտագործված բառերը այն տպավորությունն են ստեղծում,
կարծես թե հերոսներից մեկն ու մեկն է խոսում: Այսպես. «Երիտասարդը հագել էր գոմշի
կաշուց դաքաղած տրեխներ՝ գույնզգույն գուլպաներով, բրոյա գոլավոր կիսաթև աքա, որի
տակից երևում էին կապույտ ելակը և նախշուն վերնաշապիկը: Մեջքին փաթաթել էր
կարմիր գոտի, իսկ գլխին ծածկել էր ասեղնագործված գդակ, որի շուրջը ոլորած հնամաշ
փուշու մաշված ծապերը ճակատին ու քունքերին իջնելով, մեղմիկ օրորվում էին նրա տըխ-
րամած դեմքի վրա»: Այս հատվածում նկարագրվում է Խողեղանի (18—19) արտաքինը:
Նա հուլիվ է և արտաքին կեցվածքը պետք է համապատասխաներ տվյալ միջավայրում
ապրող իր հերոսին: Եվ քննակն է, որ գրողը օգտագործել է աքա, գոլավոր, ծապեր, փու-
շի, տրեխ բառերը, որոնք լայնորեն տարածված էին բարբառում:

Նույն բանը չենք կարող ասել վեպերում գործածված քրդական բառերի մասին: Օրի-
նակ՝ «Կանաչ ելակի վրա պապղում է սպիտակ սաղաֆների շարանը: Գլխին դրած էր
հնամաշ քոֆի՝ մետաղյա պողկենրով զարդարված» (17—19):

Այս օրինակում հեղինակային խոսքում գործածված պոլըկ քրդական բառի փոխարեն հեղինակն ազատորեն կարող էր օգտագործել հայերեն համարժեքը, մանավանդ մեկ այլ օրինակում այդպես էլ վարվել է. «Փեսան այդ ոսկիները փայլեցնելով ուղարկել էր հրդագոմ, որոնցով Սանամը զարդարել էր հարսի ճակատանոցը» (158—159):

Առհասարակ, կերպարին բնորոշ բարբառային բառեր թափանցել են նաև հեղինակային խոսք: Եթե «Ռանչպարների կանչը» վեպում հեղինակային խոսքում բարբառային բառեր են գործածվում, ապա դա հերոսի մտածողությանը հարազատ մնալու միտում է: «Ռանչպարների կանչը» վեպում հեղինակային խոսքը կերպարի միջոցով է արտահայտվում, մինչդեռ «Խողեղանում» հեղինակային խոսքի արտահայտչին ինքը՝ հեղինակն է: «Խողեղանում» նույնիսկ հեղինակը բարբառային բառերը ընթերցողին մատչելի դարձնելու նպատակով հենց տեքստում տալիս է դրանց մեկնությունը՝ նկարագրությամբ կամ հումանիշով: Օրինակ՝ «Այդ հարբանի մեջ, որ մի չորացած պարկ էր, կար ընկուղի փայտից շինված մի հաստ կաթնաման և գդալ» (16—15): «Նա լուռությամբ բռնեց Թամոյի թևից և նրան տարավ դեպի շողտունը՝ ջրաղացի այն նկուղային ցուրտ մասը, որտեղ ջուրը վերևից թափվելով շարժում էր անիվը» (42—15): «... որ չէր հասցնում հաց կողել (թխել) տան համար» (572—15):

Հիմնականում ընտրված գավառական և բարբառային բառերը ավելի բնորոշ են գյուղական աշխարհի մարդկանց ապրելակերպին, գործելակերպին, արտահայտում են ժամանակի հասարակական հարաբերությունները: Օրինակ՝ «Նրանք պարտավոր էին շաքաթվա մեջ մի քանի օր ձրի աշխատել քուրդ աղայի համար և նրան խաֆիրության տուրք վճարել»: «Հաջին քուրդը ծածկեց և ամբողջ գործին հրավիրեց Ստիմոք՝ տոնախմբությանը» (310—15): «Բայաղը արթնանալով և երեսը խաչաձև զգուցող վաշտում էի երկվազը»: (187—15): «Մասիկից ալյուրն առնելով լցնում էր պարկի մեջ» (476—15):

Նմանատիպ բառերի առատությունը Դաշտենցի հեղինակային խոսքում, անշուշտ, հեղինակի ժողովրդական բառին ու քանին հարազատ մնալու ձգտումն էր: Եվ չպետք է մոռանալ, որ Դաշտենցը սասունցի աշխատավոր մարդկանց և նրանց սովորությունները հարազատորեն վերարտադրելու համար է օգտագործում այդ բառերը, և պատկերման նրա ոճը դառնում է արևմտահայության այդ հատվածի կյանքի ճշմարտացի նկարագրության արդյունքը: Թե ինչու են «Խողեղանում» բարբառային բառերն այդքան առատ, հեղինակը բացատրում է նրանով, որ «շինական լեզուն անհետանում է», և «ուզում է «դրանից մի պատառ մնա մեր գրքերի մեջ իբրև թխամոր»⁵:

Իհարկե, դժվար է Դաշտենցից պահանջել, թե ինչու նրա լեզուն արդի գրական հայերենի որոշակի համակարգի մեջ չի տեղավորվում: Սասունցիների մասին, քնական է, նա պետք է գրեր մի լեզվով, որը պետք է տար իր նկարագրած միջավայրի, ժողովրդի ծոցից դուրս ելած հերոսների ճշմարիտ պատկերը: Հիրավի, հենց նյութի ընտրությունն է թելադրում նմանօրինակ լեզու և ոճ:

«Գեղարվեստական երկի լեզվի առանձնահատուկ կողմերից մեկն էլ այն է, որ ի տարբերություն գրական լեզվի, որն ավելի շատ մշակված, կատարելագործված և նորմավորված համակարգ է, համեմատաբար ազատ է խիստ պարտադրվող քերականական օրենքներից ու ձևերից: Այստեղ լեզվական «շեղումները» որոշ դեպքերում հնարավոր են, անհրաժեշտ և պայմանավորված են ոչ միայն նյութի կամ ոճի թելադրանքով, այլև հեղինակի մտածելակերպով և ինքնատիպությամբ»⁶:

Ինչ վերաբերում է «Ռանչպարների կանչում» գործածված բարբառային բառերին, հարկ է նշել, որ նրանում բարբառային բառերը, ի տարբերություն «Խողեղանի», օգտագործվել են սահմանափակ, միայն հերոսների խոսքը ոճավորելիս, իսկ դա արվել է մեծ հետադարձությամբ և ճաշակով:

Դաշտենցի արձակի բառապաշարի անքակտելի մասն են կազմում դարձվածքները, հարադրավոր քայերը, ասացվածքները, որոնք հիմնականում հեղինակի ժողովրդային մտածելակերպի արդյունք են: Դրանց շնորհիվ և՛ հեղինակային, և՛ հերոսների խոսքերը դառնում են ավելի արտահայտիչ, իսկ պատկերվող երևույթը կամ հերոսը՝ ավելի շրջափելի, իրական: Ուստի և զարմանալի չէ Դաշտենցի արձակ գործերում գործածված հարադրավոր քայերի և դարձվածքների առատությունը: Գրողի զգացական աշխարհի կողմից տվյալ երևույթի ընկալումն ու գնահատումը համահնչյուն է ժողովրդի մտածելակերպին: Օրինակ՝ «Այնքան մտո՛ պեծպեծին էր տալիս ձյունը Մարութա լեռան ճղյակ գագաթին» (16—60): «... առողջ ցողունների շուրջը բուկ էին տալիս, որ փարթամանան (197—60): «Նրա աչքերի առաջ փոպ էր գալիս հայոց աշխարհը» (330—60): «Թոռնիկը լաց էր լինում, երբ

⁵ Խ. Դաշտենց, Խողեղան, Եր., 1960, էջ 487:

⁶ Լ. Եզեկյան, Հր. Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Եր., 1986,

պապը նկարագրում էր Դավթի և Խանդուրի եղեռնական մահը» (481—80): «... երդիկից քարյուղ լցնելով կրակ տվին» (315—14): «Գյուղացիները փախցնողին հետապնդելով բռնել քերել էին Նեմրուծի Ասլանի մոտ, որ նա դատն անի» (54—14): «Եվ ճիշտ այն միջոցին, երբ Անդրամիկը զինաթափված էր, սուլթանից հրաման եկավ, որջ թե մեռած, ձեռք զցել Սերոբ Աղբյուրին» (68—14): «Բավական առաջացել էինք, երբ քեռի Երանուսը ձեռնափայտի թեթև հարվածով ջորու գլուխը շուռ տվեց դեպի մի քարակ ոտնուղի» (79—14): «Ձին մահկանացուին տեսնելով թափ տվեց բաշը, ուզեց ետ գնալ, բայց Մոսե Խոն հանկարծ ցատկ կատարեց, ձեռքը զցեց ձիու բաշին» (116—14):

Այս և նմանատիպ հարադրությունների միջոցով խոսքն ստանում է յուրահատուկ երանգավորում: Այդ խոսքի պատկերավոր արտահայտման մի ձև է, որը ժողովրդի ստեղծածն է, բայց միաժամանակ նաև դաշտենցյան հնչեղություն ունի: Հեղինակը քաջ գիտակցում է, որ այնպե՞ս էր տալիս հարադրության փոխարեն, եթե գործածեր գրական համարժեքը՝ փառքում էր, ապա խոսքը կկորցներ իր հմայքը:

Դաշտենցի գործածած հարադրությունների մեջ իմաստային տեսակետից կարելի է առանձնացնել այնպիսիները, որոնք ունեն համարժեքներ և հարադրություններ, որոնք զուգահեռ ձևեր չունեն: Օրինակ՝ կանգ առնել—կանգնել, բաց անել—բացել, ոտքի ելնել—կանգնել, փոլ գալ—փլվել, ցատկ կատարել—ցատկել, շուռ գալ—շրջվել, զինաթափ անել—զինաթափել, ծեծ տալ—ծեծել, փորձ անել—փորձել, բաց անել—բացել, լսելի դառնալ—լսվել, ցրիվ տալ—ցրել, ձի գ տալ—ձգել, լաց լինել—լացել, շալակն առնել—շալակել, խույս տալ—խուսափել, նահանջ տալ—նահանջել, քուն մտնել—քնել և այլն:

Այս կարգի հարադրությունները կարող են փոխարինվել նույնարմատ բայական համարժեքներով:

Հաճախ Դաշտենցը նախընտրել է վեհացական բայով և գոյականով հարադրավոր կապակցությունները, իսկ դա թելադրվել է ժողովրդական մտածողությամբ: Խոսակցական լեզվում ավելի մեծ հաճախականություն ունեն բայական հարադրավոր բարդությունները, որոնք խոսքն ավելի աշխույժ ու կենդանի են դարձնում: Օրինակ՝ ծիծ տալ, կաթ թափ, քուն մտնել, լաց լինել, փորձ անել, ձեռքով անել, ոտք դնել, կրակ տալ, սպիմահար անել, խուստովան անել, գլուխ տալ և այլն: Կան նաև հարադրավոր բայեր, որոնք նույն հիմքով կազմված իմաստային համարժեք, զուգահեռ ձևեր չունեն: Օրինակ՝ վրահ առավ (հագավ), տանջամահ անել (տանջելով մեռցնել), տափ անել (թաքնել), ձեռքն ընկնել, ցույք առնել (լուսավորվել), դիրք մտնել (թաքնվել), շուռուտուռ տալ (շրջել այս ու այն կողմ), տակն ու վրա անել (խառնել), սպիմահար անել, ներս ու դուրս անել, տեղ տալ (համաձայնել), վերջ տալ (սպանելու իմաստով), դուրս պրծնել, աչք ածել (ուշադիր նայել շուրջը), ձեռք զցել (տիրանալ), կասկած տանել (կասկածել), դադար առնել (հանգստանալու իմաստով), փեշու անել (սմբակներով խփել գետնին), ձեռք բերել (ստանալ), հանձն առնել (ստանձնել) և այլն:

Դաշտենցի արձակում մեծ թիվ են կազմում դարձվածքները: Դարձվածքների, որպես վերաիմաստավորված կայուն կապակցությունների, մեջ պարզորոշ դրանքովում է ժողովրդի լեզվամտածողությունը:

Դաշտենցի արձակում գործածված դարձվածքների մեջ իր արտահայտությունն է գտել հեղինակի աշխարհագրագրաման սեփական ընկալումը: Դարձվածքների միջոցով գրողը հասնում է խոսքի պատկերավորման մի նոր աստիճանի, խոսքի հակիրճության և հուզականության ստեղծմանը, ոճի բազմազանությանը: Դարձվածքների առատ գործածության մեջ, անշուշտ, իր նշանակությունն է ունեցել հեղինակի ընտրած թեման: Դարձվածքների միջոցով գրողը հասնում է ստեղծված իրավիճակի կամ պատկերի տեսանկյունից, խոսքը դարձնում ավելի խոսուն և կենդանի: Դաշտենցն այդ անում է մեծ հմտությամբ և ճաշակով:

Քննարկվող երկերում գործածված դարձվածքների մեջ մեծ խումբ են կազմում մարդու մարմնի մասերով կազմվածները: Օրինակ՝ արյունն աչքն առնել, աչք զցել, աչքը կըտրել, ախաճը մտնել, ախաճը քանդել, ախաճի օղ դարձնել, քար բերնիս, մի բերան ծխել, բերանը փակ (պահել), գլուխը կորցնել, գլուխը տանել, երեսին մեռոն չկա, թևերի վրա առնել, լեզու գտնել, ձեռքը փակ, ձեռք զցել (նրան), ձեռքերը լվանալ (գործից), ճակատի արդար քրտինք, մատը խառը, մատի խունկ թափել, մեջքից թույլ, սիրտը փուլ գալ, սիրտը ահ ընկնել, ծնկի գալ և այլն:

Դաշտենցի արձակի դարձվածքների քննությունից պարզվում է, որ նրանում անվանական դարձվածքային միավորները ավելի սակավ են, քան բայականները: Անվանական դարձվածքներից են, օրինակ, ասեղ կտրող, անթիքա գործիչ, աստղը խավար, բախտը սև, գրպանը դատարկ, երեսը սև (անամոթ), խոսքը բերանին, խաղ ասող, խելքի ծով, ծուռ առտուցի, կրակն շապիկ, կանաչ մեռոն, ձեռքը երկար, մեկ սարի ծաղիկ, մատը խառը, մեռնող պտուղ, մեղքը վիզը, շան կյանք, ոսկի մարդ, պոչավոր սուտ, սուլթանի թափառ (գահ), սպիտակ մորուք (ծերունի) և այլն:

Բայական դարձվածքները մեծ հաճախականություն ունեն: Դրանք հավաստում են զոհի խոսքի հարստության, պատկերավորության, նպատակալացության, շարժունության մասին: Բայական դարձվածքները աշխուժություն և կենդանություն են մտցնում հեղինակային խոսքի մեջ՝ այն դարձնելով ավելի մատչելի ու արտահայտիչ: Բայական դարձվածքներից են՝ արյուն թափել, արյուն վճարել, բաժակը բամել (խմել), բախտը ծպտալ, բախտից զարկվել, դիրք բռնել, խելքին փչել, խելքը հացի հետ ուտել, խելքը մտնել, խելքին գոռ տալ, ծանր ու թեթև անել, կյանքը ավարտել (մահանալ), կոպերը իրար կպչել (ննջել), կոտոր զարկել, կրակի տակ տալ (այրել), հավերժին բշա ասել (չվնասել), մեղքի տակ մտնել, մեջտեղից վերացնել (տպանել), ջանը դող ընկնել (վախենալ), սառը ջուր լցնել (զլխին) (հիասթափվել), վերջ դնել կյանքին (սպանել), բոքը կտրվել (բնաջնջվել) և այլն:

Դաշտենցի արձակում կան նաև հեղինակային դարձվածքներ, որոնք նույնպես կազմվել են ժողովրդական դարձվածքներից համահնչյուն: Օրինակ՝ «Այդ վեճը լուծելու համար դուռնս Խաթավիհի կույի օրերից զենքի տակ էր մտել նաև Առդա Ջորիկը»: Այստեղ զենքի տակ էր մտել դարձվածքը գործածված է կովելու, ճակատելու իմաստով: «Քու ճուղը ուղիղ Դավթին է դիպչում, լառ,— հանդիսավոր տոնով ասաց ջրաղացպանը, Ասատուրի ազգատոհմը ոտքի վրա պեղելուց և նրա դաստակը թեթևակի շոշափելուց հետո (էջ 44—10): «... Արան հող ամփոփեցինք» (424—14): «Մեր մատի խումկ թափավ քարերը քոմեղով (498—10): «Գլուղում արդեն տարածվել էր, որ Տոնեն լվանում էր յուր մեղքերը (118—50): «Արարոն Տիլիբոզին կապեց արոտ և շտապեց աղբյուր (37—14): «Մեղա քար թերհիս» (18—14):

Դաշտենցի հեղինակային խոսքին մի առանձին հմայք են հաղորդում վեպերում օգտագործված թևավոր խոսքերը, առածները, ասացվածքները: Դրանք ստեղծվել են ժողովրդի բազմադարյան ստեղծագործական կյանքում, որոնցում ամփոփված են ժողովրդի սովորությունները, փորձն ու իմաստությունը: Ժողովուրդը դարավոր փորձով իմաստացած ստեղծել է այսպիսի ասացվածքներ. օրինակ՝ «Անժառանգ անմահությունը անեծք է» (46—10): «Ջրի առաջ ծնվողը ջրի հետ էլ կերթա» (21—10): «Քաղցած մարդը էնքան չի զգում լույսի կարիքը, որքան կուշտ մարդը» (102—10): «Ամեն մարդ իր ճակատագրով կապրի» (290—14): «Բերանն այլոված մարդը թանը փչելով է խմում» (407—14): «Ամեն քար իր տեղումն է ամուր» (524—10): «Օրը առավոտից է հայտնի» (261—10): «Մի օր սարի լրա էս, մեկ էլ տեսար՝ ձենդ անդունդից եկավ» (67—14): «Ապագան երիտասարդի ճակատին է և ծերի թիկունքին» (289—14) և այլն:

Դաշտենցի արձակի քառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ հեղինակի լեզուն իր զարգացումն է ունեցել: Երկու վեպերում էլ որոշակիորեն նկատվում է հեղինակային խոսքի և հերոսների խոսքի մերձացման միտում: Եթե «Նողեղանում» հեղինակային խոսքը ճոխնում է հերոսների խոսքին, ապա «Ռանչպարների կանչը» վեպում նկատվում է հերոսների խոսքի մերձեցում հեղինակային խոսքին: «Նողեղանում» բարբառային և ժողովրդախոսակցական բառերի առատ գործածությունն է նախընտրում հեղինակը, որը սակայն չի նսեմացնում Դաշտենցի լեզվի հմայքը, ընդհակառակը, այդ լեզուն այնքան է մոտենում իր հերոսների լեզվին, որը և, ի վերջո, նպաստում է խոսքի յուրատեսակ ոճավորմանը: «Ռանչպարների կանչում» Դաշտենցի լեզուն արդեն տարբերվում է նախորդից այն առումով, որ այստեղ հեղինակը հղկել է այն, զեղարվեստական մշակվածության տեսակետից հասցրել որոշակի կատարելության: Այս վեպում հեղինակի խոսքը ավելի սեղմ է, ավելի պարզ ու կենդանի, ավելի ինքնաբերիչ: «Ռանչպարների կանչի» լեզուն գրական արևելահայերենն է հիմնականում՝ միահյուսված սակավաթիվ բարբառային և ժողովրդախոսակցական բառերով:

Այսպիսով, Խ. Դաշտենցի արձակի լեզուն թխում է նրա ընտրած և՛ վեպերի նյութից, և՛ հերոսների ընտրությունից: Գրելով աստուցի շինականի մասին, նա պետք է գրեր այնպիսի լեզվով, որ հասկանալի լիներ աշխատավոր մարդուն, որ այդ լեզուն հարազատ լիներ և կենդանի հնչեր: Եվ գրողը մտածում ու գրում է այնպես, ինչպես այդ կաներ դարերից եկող աստուցի ժողովուրդը, մի ժողովուրդ, որն օժտված է մտքի թռիչքներով. անձնագրոն ու առասպելական արարքներով: Այդ է պատճառը, որ Դաշտենցի լեզուն ունի մի ինչ-որ անբացատրելի ներքին ուժ, անսովոր հմայք ու կենդանություն:

А. З. АДИЛХАНИЯН—Языковые особенности прозы Х. Даштенца.—В статье дается краткая характеристика языковых особенностей прозы Даштенца, его стилистическая целостность как в авторском слове, так и в языке героев. подчеркивается народность, ясность, яркость слога, обусловленная выбором темы. В статье разграничиваются и выделяются литературные, разговорные и диалектные пласты речи, с помощью которых воссоздается колорит эпохи, индивидуальность образов и самобытность авторского слова.